

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

.....ի 2014 թ.

N-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 176-Ն ՈՐԱՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «Ներքին աուդիտորի որակավորման կարգը և հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար կազմակերպություններին ներկայացվող հիմնական պահանջները հաստատելու մասին» N 176-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ կետը և 3-րդ կետի 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

2) Որոշման N 1 հավելվածի՝

ա. 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա.» պարբերության մեջ «սույն կարգով սահմանված պայմաններով քննության 1-ին և 2-րդ փուլերը հանձնած» բառերը փոխարինել «սույն կարգով սահմանված պայմաններով քննությունը հանձնած» բառերով,

բ. 4-րդ կետի 1-ին ենթակետի «բ.» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. սույն կարգի 6-րդ կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձինք»,

գ. 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) սույն կարգի 5-րդ կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկ»,

դ. 7-րդ և 8-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

ե. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Քննությունն անցկացվում է հայերենով՝ թեստավորման եղանակով:»,

զ. 10-րդ կետից հանել «,իսկ ներքին աուդիտի էլեկտրոնային տեղեկատվական համակարգի իմացության ստուգման համար՝ խնդիրները» բառերը,

է. 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Քննությանը կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող՝ սույն կարգի 14-րդ կետի պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր լիազոր մարմին են ներկայացրել դիմում՝ համաձայն սույն կարգի N 1 ձևի:»,

ը. 16-րդ կետում «Հաճնաժողով» բառը փոխարինել «Լիազոր մարմին» բառով համապատասխան հոլովաձևերով,

թ. V գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«V. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ»,

ժ. 19-րդ կետում «Քննության առաջին՝ թեստավորման փուլն անցկացվում է էլեկտրոնային եղանակով» բառերը փոխարինել «Քննությունն անցկացվում է թեստավորման միջոցով՝ էլեկտրոնային եղանակով» բառերով:

ժա. N 1 հավելվածի 20-րդ կետից հանել «տվյալ փուլի» և «հանձնաժողովի առնվազն 3 անդամի» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ներկայացուցչի» բառերով,

ժբ. 21-րդ կետում «Քննության առաջին փուլն անցկացնելու» բառերը փոխարինել «Քննությունն անցկացնելու» բառերով և «առաջին փուլի» բառերը հանել,

ժգ. 22-րդ կետում «Հանձնաժողովի անդամն» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ներկայացուցիչն» բառերով,

ժդ. 23-րդ կետում «հանձնաժողովի կամ դրա անդամներից որևէ մեկի կողմից» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ներկայացուցչի կողմից» բառերով,

ժե. 24-րդ կետից հանել «առաջին փուլի» բառերը և «հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ներկայացուցիչը»,

ժզ. 25-րդ կետում «Հանձնաժողովն ամփոփում է քննության առաջին՝ թեստավորման փուլի արդյունքները» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ներկայացուցիչը համակարգչային ծրագրից դուրս է բերում քննության թեստավորման արդյունքները»,

ժէ. 26-րդ կետում «Քննության առաջին փուլը հաղթահարելու» բառերը փոխարինել «Քննությունը հաղթահարելու» բառերով,

ժը. 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27. Քննության ավարտից հետո անմիջապես Լիազոր մարմնի ներկայացուցիչն արձանագրում է համակարգչում ամրագրված մասնակիցների աշխատանքների արդյունքները և դրա մասին նույն օրը տեղեկացնում մասնակիցներին: Քննությունը հաջողությամբ հաղթահարած մասնակիցները 2 աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են գրանցման՝ լիազոր մարմնի կողմից հրապարակվող ցանկում:»,

ժթ. VI գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«VI. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ»,

ժժ. 29-36-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

Ժի. 37-րդ կետում «Քննության երկրորդ փուլը հաջողությամբ հաղթահարած» բառերը փոխարինել «Քննությունը հաջողությամբ հաղթահարած» բառերով և «N 4 ձևի» բառերը փոխարինել «N 3 ձևի» բառերով,

Ժլ. 38-րդ կետից հանել «՝ ծրագրի քննության թեստի արդյունքները լիազոր մարմնի կողմից հրապարակվելուն հաջորդող օրը» բառերը,

Ժխ. 40-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

Ժծ. Ձև N 1-ից հանել «1-ին փուլին» բառերը,

Ժկ. Ձև N 3-ն ուժը կորցրած ճանաչել,

Ժհ. Ձև N 4-ում «Ձև N 4» բառերը փոխարինել «Ձև N 3» բառերով,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ.

Երևան